Հովհաննես Թումանյան

Ո՛հ, մեղմացնել չես կարող դուն...

Ո՛հ, մեղմացնել չես կարող դուն
Սաստկությունը տանջանքիս,
Եվ հաշված են թույնով լեցուն
Սակավ ժամերը կյանքիս.

Բայց տեսնում ես, ես հանգիստ եմ,
Մի՛ լար և դուն, իմ անգին,
Քո արտասուքն ես կարող չեմ
Փոխարինել այս կյանքին.

Օ՜, գերությունն ես ատում եմ,

Եվ ցոփ կյանքը հեշտասեր,
Այժմ, ահա, թոթափում եմ
Նրանց լուծը մահաբեր.

Սակայն գիտե՞ս, թե այսքան
Ինչն է տանջում ինձ այսպես

Արտասուքի և տրտմության
Համար չէի ծնված ես.

Ես ուզեցի ազատ երգել
Ե՛վ օրհնություն, և՛ անեծ,
Սիրով սրտերը բորբոքել,

Որ նախանձը բաժանեց.

Կյանքի աղմուկն և գոյության
Պատերազմը տմարդի
Արգելեցին լիաբերան
Երգել զեղմունքն իմ սրտի.

Ես լռեցի. կատաղությամբ
Սիրտս ուժգին տրոփեց,
Ոգևորված և համարձակ
Մտա կռվի ասպարեզ.

Բայց իմ խնդրած այն սրբազան

Կռիվը չէր բորբոքված,
Ուր կռվում են ազատության,
Պատվի համար անարգված.

Անհավասար և վաղաժամ
Կռվում ուժերս վատնեցի.

Հափշտակված, հոժարակամ
Ինձ գերության մատնեցի.

Ո՛հ, չես կարող մխիթարել,
Հոգիս անչափ է տրտում,
Աչքս դեռ նոր եմ բաց արել

Գերեզմանս եմ նկատում:

1890